ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 31 » օգոստոսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-20/16 բողոքը քննող

Հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Անգին Հարությունյանին (ՀՎՀՀ՝ 40524934) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 15.12.2015թ. թիվ 01-20/649 գրության հիման վրա, 12.01.2016թ. թիվ 1/73-1/244-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել Ա/Ձ Անգին

Հարությունյանին (այսուհետ նաև՝ Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 12.02.2016թ. թիվ 01/04.1/418-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2016թ. թիվ 1/73-1/244-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է Ա/Ձ Անգին Հարությունյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ, Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից ***մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն Ա/Ձ Անգին Հարությունյանի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 11.12.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2016թ. թիվ 1/73-1/244-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Անգին Հարությունյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ա/Ձ Անգին Հարությունյանին ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Անգին Հարությունյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 18.01.2016թ. թիվ 01/04.1/71-16 գրությամբ դիմել է Ա/Ձ Անգին Հարությունյանին:

Ընկերությունը 07.06.2016թ. Կենտրոնին ուղղված գրությամբ հայտնել է, որ մասնակցել է «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊԼՀ-ՇՀԱՊՁԲ-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին և ճանաչվել է որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Անգին Հարությունյանի վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 38000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Ա/Ձ-ն գրությամբ հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն՝ կից ներկայացնելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Հրազդանի տարածքային հարկային տեսչության 07.06.2016թ. տեղեկանքի պատճենը, ըստ որի՝ Ա/Ձ-ն 11.12.2015թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ չունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 18.01.2016թ. թիվ 01/04.1/58-16 գրությամբ դիմել է «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու):

Պատվիրատուն 26.01.2016թ. թիվ 01-20/68 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊԼՀ-ՇՀԱՊՁԲ-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Անգին Հարությունյանը:

Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Անգին Հարությունյանի վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն: Հիմք ընդունելով նշված եզրակացությունը, Ա/Ձ-ի հայտը մերժվել է:

4. ՍՑ-ԳԲԽ-20/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Անգին Հարությունյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՊԼՀ-ՇՀԱՊՁԲ-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի թվով 109 չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Անգին Հարությունյանը:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (11.12.2015թ.) չունի ժամկետանց հարկային

պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 3-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգի 1-109 չափաբաժինների մասով որպես 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Անգին Հարությունյանին:

4. Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 11.12.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Անգին Հարությունյանի կողմից 2015թ. դեկտեմբերի 11-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ Անգին Հարությունյանը 2015թ. դեկտեմբերի 11-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 37855 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.12.2015թ. ժամը 15:30-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ Նախարարության կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ա/Ձ Անգին Հարությունյանը ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, իսկ 3-րդ կետով որոշում է կայացրել մերժել Ա/Ձ Անգին Հարությունյանի հայտը:

7. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.02.2016թ. թիվ 01/04.1/418-16 գրությամբ արձանագրել է Ա/Ձ Անգին Հարությունյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել Նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված

դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

8. Ի պատասխան Կենտրոնի 12.02.2016թ. թիվ 01/04.1/418-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ պահանջել է Ա/Ձ Անգին Հարությունյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կազմակերպել բողոքարկման գործընթաց:

9. Ա/Ձ-ն 07.06.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն, կից ներկայացնելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Հրազդանի տարածքային հարկային տեսչության կողմից 07.06.2016թ. տրամադրած տեղեկանքի պատճենը, ըստ որի՝ Ա/Ձ Անգին Հարությունյանը 11.12.2015թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ չունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:

10. Կենտրոնը 13.07.2016թ. թիվ 01/04.1/2682-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 11.12.2015թ. ունեցե՞լ է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ***ժամկետանց հարկային պարտավորություններ***, թե ոչ:

11. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, հիմք ընդունելով Հրազդանի ՀՏ-ի տրամադրած տեղեկատվությունը, 29.07.2016թ. թիվ 6-1/22809-16 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 20.07.2016թ. դրությամբ Ա/Ձ Անգին Հարությունյանը (ՀՎՀՀ 40524934) 11.12.2015թ.-ին չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

5. ՍՑ-ԳԲԽ-20/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2016թ. թիվ 1/73-1/244-16 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությունը, Ընկերության 07.06.2016թ. գրությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 29.07.2016թ. թիվ 6-1/22809-16 գրությունը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Հրազդանի տարածքային հարկային տեսչության կողմից 07.06.2016թ. տրամադրված տեղեկանքի պատճենը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված

որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 124-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկում է կենտրոնի կողմից ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայնության դեպքում՝

1) դադարեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու նպատակով նախաձեռնած գործընթացը և տեղեկացնում դիմող պատվիրատուին.

2) հակառակ դեպքում կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առարկությունները և *պահանջում նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու ընթացակարգը:*

Այսպիսով, «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՊԼՀ-ՇՀԱՊՁԲ-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի թվով 109 չափաբաժիններին մասնակցելու նպատակով Ա/Ձ Անգին Հարությունյանը ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (11.12.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատուի Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի ***Ա/Ձ Անգին Հարությունյանը 2015թ. դեկտեմբերի 11-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 37855 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հանգամանքը, 15.12.2015թ. ժամը 15:30-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 3-րդ կետով որոշում է կայացրել Ա/Ձ Անգին Հարությունյանի հայտը մերժել:

Կենտրոնն արձանագրում է, որ Ա/Ձ Անգին Հարությունյանը ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Հրազդանի տարածքային հարկային տեսչության 07.06.2016թ. տեղեկանքի պատճենը, ըստ որի՝ Ա/Ձ Անգին Հարությունյանը 11.12.2015թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ի պատասխան Կենտրոնի 13.07.2016թ. թիվ 01/04.1/2682-16 գրությանը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, հիմք ընդունելով Հրազդանի ՀՏ-ի տրամադրած տեղեկատվությունը, 29.07.2016թ. թիվ 6-1/22809-16 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 20.07.2016թ. դրությամբ Ա/Ձ Անգին Հարությունյանը (ՀՎՀՀ 40524934) ***11.12.2015թ.-ին չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:***

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 29.07.2016թ. թիվ 6-1/22809-16 գրությունը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Հրազդանի տարածքային հարկային տեսչության 07.06.2016թ. տեղեկանքը, համաձայն որի՝ Ա/Ձ-ն ***11.12.2015թ.-ին (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** չունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավոր-

ություններ, Կենտրոնը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Անգին Հարությունյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա չէ Ա/Ձ-ին Ցուցակում ներառելու հիմքը, Կենտրոնն առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Անգին Հարությունյանին (ՀՎՀՀ՝ 40524934) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-20/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան